ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

The article is devoting to the examination of the mutual relations between Armenian state debt and Economic Growth with help of econometrics. The system of econometric equations are represented, which describes the simultaneous effects of the debt and economic growth on economy as whole. The study not only gives detailed answers on what kind of factores affect the debt, but also makes the predictions for the future.

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ասիստենտ, ՀՊՏՀ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *սոցիալ-տնտեսական վերափոխումներ, գործոնային վերլուծություն, ինստիտուցիոնալ վերափոխումներ, վերափոխումների քաղաքականություն, մոդել, զարգացող տնտեսությամբ երկրներ*

Զարգացող տնտեսությամբ երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության գերակայությունների հստակեցման, իրագործման մեխանիզմների ընտրության և նպատակայնության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության առանձնահատկությունների բացահայտումը: Ուստի սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր է դրվել գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ բացահայտել և վերլուծել զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ուղենիշների փոփոխությունը:

Զարգացող տնտեսությամբ երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության գերակայությունների հստակեցման, իրագործման մեխանիզմների ընտրության և նպատակայնության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության առանձնահատկությունների բացահայտումը: Ուստի սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր է դրվել բացահայտել վերջին տարիներին զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ուղենիշների փոփոխությունը և ուղղվածությունը: Սույն խնդիրը լուծելու նպատակով կիրառվել են գործոնային վերլուծության գործիքակազմ, որը հետազոտական լայն տիրույթ է ապահովում զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացվող վերափոխումների ընդհանրական բնութագրիչների բացահայտման համար: Այսպես՝ գործոնային վերլուծությունը հնարա-

վորություն է տալիս դուրս բերել վերափոխումները բնութագրող ցուցանիշներում առկա անբացահայտ (լատենտային) փոփոխականները (գործոնները)[1]:

Այս դեպքում, առանձին ոլորտներում վերափոխումների բնութագրիչներից ելնելով, ընդհանրական գնահատական է տրվում սոցիալ-տնտեսական վերափոխումներին, որոնք էլ, ըստ էության, կարտացոլեն առանձին երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության առանձնահատկությունները:

Ստորև SPSS ծրագրային փաթեթի գործադրմամբ 1990–2014 թթ. իրականացրել ենք գործոնային վերլուծություն, որի առանցքում ՎԶԵԲ-ի կողմից զարգացող տնտեսությամբ երկրների համար հաշվարկվող վերափոխումների հետևյալ վեց ցուցանիշի արժեքներն են՝ խոշոր կազմակերպությունների մասնավորեցում, փոքր կազմակերպությունների մասնավորեցում, կառավարում և ձեռնարկությունների վերակառուցում, գների ազատականացում, փոխարժեքի և առևտրի ազատականացում և մրցակցային քաղաքականություն[2]:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա գնահատվում են երկրների շուկայական տնտեսակարգի ձևավորմանն ուղղված վերափոխումների արդյունքները: Ըստ այդմ՝ ՎԶԵԲ գնահատականները հնարավորություն են տալիս լուծելու մեր առջև դրված խնդիրը, այն է՝ բացահայտելու առանձին ժամանակահատվածներում զարգացող տնտեսությամբ երկրներում վերափոխումների քաղաքականության ուղենիշներն ու ոլորտները:

Վերլուծության մեջ ներառվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող 28 երկիր՝ Ալբանիան, Ադրբեջանը, Բելառուսը, Բոսնիան և Հերցեգովինան, Բուլղարիան, Էստոնիան, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ուկրաինան, Հայաստանը, Հունգարիան, Սերբիան, Լեհաստանը, Լատվիան, Խորվաթիան, Ռուսաստանը, Ռումինիան, Լիտվան, Սլովենիան, Սլովակիան, Տաջիկստանը, Վրաստանը, Ղազախստանը, Մակեդոնիան, Մոլդովան, Չեռնոգորիան, Մոնղոլիան և Ղրղզստանը:

1990–2014 թթ. իրականացված գործոնային վերլուծությունն արդյունքներից[3] կարելի է եզրակացնել, որ առանձին ժամանակահատվածներում ստացված անբացահայտ գործոնների բնութագրիչները որոշակի ընդհանրություններ ունեն: Մասնավորապես՝ առանձին տարիներին համընկնում է ինչպես վերափոխումների գործոնների թիվը, այնպես էլ դրանց կառուցվածքը: Ըստ այդմ էլ, անբացահայտ գործոնների կառուցվածքի ընդհանրություններից ելնելով, դիտարկվող 28 երկրում 1990–2014 թթ. իրականացրած վերափոխումների ողջ ընթացքը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ երեք ժամանակահատվածի՝ 1990–1992 թթ., 1993–2006 թթ. և 2007–2014 թթ.:

---

[1] Орлова И.В. и др., Многомерный статистический анализ в экономических задачах: Компьютерное моделирование в SPSS, Учебное пособие, М., 2009, с. 154.

[2] Transition indicators methodology, European Bank for Reconstruction and Development,

http://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395237866249&pagename=EBRD%2FContent%2FContentLayout

[3] Հաշվարկել է հեղինակը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (http://www.ebrd.com/what-we-do/economic-research-and-data/data.htm) տվյալների հիման վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործոնային վերլուծության արդյունքում ստացված անբացահայտ գործոններն արտացոլում են վերափոխումների ընդհանրական բնութագրիչները, հետևապես՝ գործոններից յուրաքանչյուրը կարելի է դիտարկել որպես վերափոխումների առանձին մոդել, իսկ գործոնի կառուցվածքը՝ որպես վերափոխումների որոշակի մոդելի նկարագիր:

Ըստ այդմ էլ՝ գործոնային վերլուծության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը. *1990–1992 թթ.* առանձնացվում էր վերափոխումների իրականացման երկու մոդել, այնինչ 1993–2014 թթ. դիտարկվող երկրները սոցիալ-տնտեսական վերափոխումներն իրականացրել են ըստ մեկ միասնական մոդելի: Սա վկայում է 1993–2014 թթ. զարգացող երկրներում տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված քաղաքականությունների ընդհանրությունների մասին:

Հարկ է նշել, որ վերլուծության արդյունքում ստացված վերափոխումների առաջին մոդելի շրջանակներում կարևորվում են խոշոր կազմակերպությունների մասնավորեցում, մրցակցային քաղաքականություն, կառավարում և ձեռնարկությունների վերակառուցում ցուցանիշները: Հատկանշական է, որ այս մոդելի անվիճելի առաջատարները Լեհաստանն ու Հունգարիան են, որոնք, վերափոխումների տեսանկյունից, լավագույն արդյունք են գրանցել, ուստի դիտարկվող ժամանակահատվածում վերափոխումների այս մոդելը կարելի է համարել հաջողված:

Ինչ վերաբերվում է վերափոխումների երկրորդ մոդելին, ապա այս պարագայում շուկայական տնտեսությանն անցումը իրականացվել է մասնավորեցման և ազատականացման ուղով: Այս մոդելը հիմնականում բնորոշ է վերափոխումներ նախաձեռնած, սակայն անբավարար արդյունքներ արձանագրած նախկին ԽՍՀՄ հանրապետություններին:

Այժմ անդրադառնանք 1993–2006 թթ. համար ստացված գործոնային վերլուծության արդյունքներին: Ուշագրավ է, որ դիտարկվող ժամանակահատվածում զարգացող տնտեսությամբ երկրների վերափոխումների քաղաքականությունում նկատելի է մրցակցային քաղաքականության բաղադրիչի համեմատաբար փոքր մասնակցությունը: Սա վկայում է զարգացող երկրներում այս ժամանակահատվածում մրցակցային օրենսդրության և ինստիտուտների թերզարգացածության, մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված մրցակցային քաղաքականության ոչ էական դերակատարության մասին:

Հարկ է ընդգծել, որ, ըստ ստացված արդյունքների, 1993–2006 թթ. գերիշխող մոդելի շրջանակներում առաջատար դիրք են զբաղեցնում Էստոնիան, Հունգարիան, Սլովակիան, Լեհաստանը, Լիտվան:

Անդրադառնալով 2007–2014 թթ. զարգացող տնտեսություն ունեցող երկրներում վերափոխումների իրականացման ընթացքին՝ կարող ենք ասել, որ դիտարկվող 28 երկրում բոլոր ուղղություններով համալիր կերպով բարեփոխումներ են կատարվել՝ հանգեցնելով բաղադրիչների դերակատարության համահավասարեցմանը: Այսպես՝ եթե նախորդ տարիներին առավել ընդգծված են վերափոխումների բոլոր վեց ցուցանիշների նշանա-

կալիության գնահատականների տարբերությունները, ապա այս ժամանակահատվածում դրանք առավել թույլ են արտահայտված:

2007–2014 թթ. գործոնային վերլուծության արդյունքներից կարելի է նաև նկատել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և դրա հետևանքով առաջացած՝ ռեսուրսների սակավության պատճառով զարգացող երկրներում սոցիալ-տնտեսական նկատելի փոխակերպումներ չեն կատարվել: Այնուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում գործոնային վերլուծության արդյունքներով գլխավոր գործոնի ամենաբարձր արժեքներն ունեցել են Էստոնիան և Լեհաստանը:

2016 թ. նմանատիպ վերլուծություն իրականացվել է «Բերթելսման» հիմնադրամի վերափոխումների ընդհանրական գնահատականի 17 բաղադրիչների (պետականություն, քաղաքական մասնակցություն, իրավունքի գերակայություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, շուկա և մրցակցություն, արժութային և գնային կայունություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, բարեկեցության մակարդակ, տնտեսության նկարագիր, կայունություն, վերափոխումների կառավարման բարդության աստիճան, կառավարման ներուժ, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, համաձայնության ձեռքբերում, միջազգային համագործակցություն[1]) հիման վրա և 100 երկրների համար:

Ըստ այդմ՝[2] առանձնացվել է վերափոխումների երկու մոդել, որոնցից առաջինը նկարագրում է այնպիսի քաղաքականություն, որտեղ գերակա են ինստիտուցիոնալ ձևափոխությունները, և մեծ կարևորություն է տրվում քաղաքական մասնակցություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, համաձայնության ձեռքբերում, իրավունքի գերակայություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում, միջազգային համագործակցություն, կառավարման ներուժ բաղադրիչներին: Հետևապես, նկարագրված առանձնահատկություններից ելնելով, սա կարող ենք պայմանականորեն անվանել «ինստիտուցիոնալ վերափոխումների մոդել»: Նկատենք, որ ստացված արդյունքների համաձայն, այն հիմնականում բնորոշ է սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող այնպիսի երկրների, ինչպիսիք են Ուրուգվայը, Չիլին, Սենեգալը, Կոստա Ռիկան, Բոթսվանան, Նիգերը, Էլ Սալվադորը, Նամիբիան, Բենին:

Վերափոխումների երկրորդ մոդելի պարագայում առանցքում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, տնտեսության նկարագիր, բարեկեցության մակարդակ, պետականություն, կայունություն, շուկա և մրցակցություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, արժութային ու գնային կայունություն հենասյուներն են: Սա կարող ենք բնութագրել որպես «տնտեսական վերափոխումների մոդել»: Հատկանշական է, որ այն հիմնականում բնորոշ է բարեկեցության բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրների, ինչպիսիք են Սինգապուրը, Սլովենիան, Հունգարիան, Չեխիան, Հարավային Կորեան:

---

[1] Methodology, Bertelsmann Foundation, https://www.bti-project.org/en/index/methodology/

[2] Հաշվարկել է հեղինակը՝ Բերթելսման հիմնադրամի (https://www.bti-project.org/en/index/) տվյալների հիման վրա:

Այսպիսով՝ գործոնային վերլուծության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող երկրները հիմնականում հետևում են «տնտեսական վերափոխումների» հետագծին, մինչդեռ համեմատաբար ցածր մակարդակ ունեցողները կարևորում են «ինստիտուցիոնալ վերափոխումները»: Ուշագրավ է նաև, որ Էստոնիան, Լեհաստանը, Լատվիան, Լիտվան վերափոխումներն իրականացրել են «հիբրիդային» մոդելի շրջանակներում՝ հաջողությամբ համադրելով վերափոխումների երկու հիմնական ուղղությունների առանձնահատկությունները:

АНИ ХАЧАТРЯН

ОСОБЕННОСТИ ПОЛИТИКИ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ РЕФОРМ В РАЗВИВАЮЩИХСЯ СТРАНАХ

Ключевые слова: *социально-экономические реформы, факторный анализ, институциональные трансформации, политика реформ, модель, развивающиеся страны*

Исследование политики социально-экономических реформ, направленных на формирование рыночной экономики, имеет решающее значение для определения приоритетов, обеспечения целенаправленности и выбора механизмов, реализации социально-экономических реформ в развивающихся странах. В данной статье предпринята попытка, с помощью факторного анализа, выявить и проанализировать особенности политики социально-экономических реформ в развивающихся странах.

ANI KHACHATRYAN

THE FEATURES OF SOCIAL ECONOMIC REFORM POLICY IN DEVELOPING COUNTRIES

Key Words: *social-economic reforms, factor analysis, institutional transformation, reform policy, model, developing countries*

The discovery of the main features of social-economic reform policy is essential in order to adjust priorities, choose mechanisms and provide purposefulness of social economic reform policy in developing countries. In this article we tried with the help of factor analysis to reveal and analyze the features of social-economic reform policy in developing countries.